ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴ (CQS)
Հետաքրքրվածության արտահայտման հրավեր
/վերջնաժամկետի երկարացում/

22 սեպտեմբերի 2022թ.

Վարկի համարը՝ IBRD 85720 «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման ծրագիր» (ՏՏԵԶԾ)

Առաջադրանքի անվանումը՝ «ՀՀ Ջերմուկ քաղաքի Ըմպելասրահի վերակառուցում ուժեղացումով» աշխատանքների նախագծային փաստաթղթերի փաթեթի մշակման և շինարարության ընթացքում հեղինակային հսկողության իրականացում

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ **LPD-28**

Վերջնաժամկետ՝ 2022թ. հոկտեմբերի 10-ը

Հայաստանի Հանրապետությունը Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկից ստացել է ֆինանսավորում՝ «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման ծրագրի» (ՏՏԵԶԾ) իրականացման նպատակով: Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման Ծրագրի նպատակն է՝ զբոսաշրջային ոլորտի ենթակառուցվածքի, ծառայությունների և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը և տեղական տնտեսությունում զբոսաշրջային ոլորտից ստացվող եկամուտների ավելացումը: Ակնկալվում է, որ Ծրագրի գործունեության արդյունքում կշահեն մասնավորապես Հայաստանի տարբեր մարզերի տեղաբնակները, զբոսաշրջիկները և ձեռնարկությունները: Ակնկալվում է, որ վերանորոգված մշակութային ժառանգության վայրերում և քաղաքներում հանրային ենթակառուցվածքներն ավելի մեծ մատչելիություն և որակ կունենան, տարածաշրջանում կաճի մասնավոր հատվածի ներդրումների ծավալը, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկությունների քանակը: Կառավարությունը կշահի զբոսաշրջության ոլորտի ընդհանուր ծախսերի և զբոսաշրջիկների բավարարվածության բարձրացման, աշխատատեղերի ստեղծման, գործակալությունների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, ակտիվների շահագործման և պահպանման կարողությունների բարելավման առումով: ՏՏԵԶԾ բաղադրիչներից մեկը վերաբերվում է Հանրային ենթակառուցվածքի տրամադրում մասնավոր ներդրումներ ներգրավելու նպատակով:

Տարածաշրջաններում մասնավոր հատվածի ներդրումները խրախուսելու նպատակով, այս բաղադրիչի ներքո աջակցություն կտրվի Ծրագրի տարածքում ընտրված մասնավոր հատվածի անձանց, որոնք շահագրգիռ կլինեն և կարող՝ զբոսաշրջության կամ ագրոբիզնեսի միջոցով հանրային ենթակառուցվածքները համալրող ներդրումներ կատարելու համար, որոնք անհրաժեշտ են ապահովելու համար ներդրումների կենսունակությունը (օրինակ, ներդրումային ենթածրագրերի մոտակայքում գտնվող հասարակական կառույցներ, ճանապարհներ/մայթեր, ջուր/ջրահեռացում, հաղորդակցություն և այլն): ՏՏԵԶ Ծրագրի միջոցների մի մասը օգտագործվելու է **«ՀՀ Ջերմուկ քաղաքի Ըմպելասրահի վերակառուցում ուժեղացումով» աշխատանքների նախագծային փաստաթղթերի փաթեթի մշակման և շինարարության ընթացքում հեղինակային հսկողության իրականացում_ իրականացման** համար:

Պայմանագրերի ստորագրման նախատեսվող ժամկետն է հոկտեմբեր, 2022թ.:
Նախագծի մշակման առավելագույն ժամկետը՝ 150 օր է,
հեղինակային հսկողության իրականացման նախատեսվող ժամկետը՝ 300 օրացուցային օր է:

Խորհրդատուի հետ կկնքվեն երկու առանձին պայմանագրեր՝

Միանվագ՝ նախագծային աշխատանքների համար,

Ժամանակի վրա հիմնված՝ հեղինակային հսկողության համար:

Խորհրդատուի գործունեության հիմնական շրջանակներն են՝

- ✓ Տարածքի ուսումնասիրում, մասնավորապես՝ տեղագրական հանույթի կազմում և ինժեներաերկրաբանական ու հիդրոերկրաբանական հետզոտությունների կատարում
- ✓ Ըմպելասրահի աղբյուրների ջրի տեխնիկական ցուցանիշների ուսումնասիրություն
- ✓ Ըմպելասրահի մանրամասն չափագրություն
- ✓ Նախագծային փաստաթղթերի մշակում ՀՀ օրենսդրության, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, տեխնիկական, ճարտարապետահատակագծային և նախագծային առաջադրանքներին համապատասխան
- ✓ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախագծի համաձայնեցում բոլոր շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների հետ
- ✓ Մասնակցել տեխնիկական պայմանների ստացման գործընթացին
- ✓ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ նախագծի ներկայացում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության
- ✓ Շինարարության ընթացքում հեղինակային հսկողության իրականացում

Խորհրդատուների որակավորման չափանիշներն են՝

	Գնահատման Չափորոշիչներ	Միավոր
	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ	100
1	***Ընդհանուր փորձառությունը,*** ***առնվազն 5 տարի, այդ ընթացքում նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման *պատշաճ կատարված 5 մլն դրամ և ավել արժեքով, առավելագույնը 10 պայմանագրեր,որոնք պետք է ներառեն հետևյալ նախագծային աշխատանքները '***	***30***
	- *հասարակական շենքերի /II , III կատեգորիաներ/, ներառյալ ներքին և արտաքին ինժեներական ենթակառուցվածքների /ջրամատակարարման, կոյուղու, էլեկտրամատակարարման/ կառուցում/վերակառուցում,*	
2	***Հատուկ փորձառությունը,*** ***վերջին 5 տարում պատշաճ կատարված առնվազն 1,0 մլն դրամ արժողությամբ 1 պայմանագիր ստորև նշված բնագավառներում՝***	***50***
	- *Պատմամշակութային հուշարձանների ամրակայում, վերականգնում*	
3	***Երկրորդ որակավորման չափորոշիչով գնահատված աշխատանքների պայմանագրային գների հանրագումար***	***20***

**) Պայմանագրի հաջողությամբ ավարտված լինելը հիմնավորվում է պայմանագրով նախատեսված աշխատանքների սահմանված կարգով ձևակերպված հանձնման-ընդունման ակտով:*

Կատարված աշխատանքների ներկայացման ձևաչափ

Աղյուսակ N1

Կազմակերպության ընդհանուր փորձառություն. ***1-ին չափորոշիչով նախատեսված պայմաններին համապատասխանող պայմանագրեր***						
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**
Պայմանագր	օբյեկտի հիմնական	Պայմանագր	Պայմանագրո	Պայմանագ	Պայման	Պատվ

ի առարկան	չափորոշիչներ - շենքի դեպքում՝ բնույթը, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը - գծային օբյեկտի դեպքում՝ երկարությունը, հզորությունը, ծավալը և այլն/	ի համարը և ստորագրման ամսաթիվը,	վ նախատեսված ավարտը	ռով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման ակտի ստորագրման ամսաթիվը	ագրի արժեքը	իրատուն
1.	1)					
	2)					
	3)					
2.						

Աղյուսակ N2

Կազմակերպության հատուկ փորձառություն. *2-րդ չափորոշիչով նախատեսված պայմաններին համապատասխանող պայմանագրեր*						
Պայմանագրի առարկան	Օբյեկտի հիմնական ցուցանիշներ /օբյեկտի տեսակը, ընդհանուր մակերեսը, աշխատանքների բնույթը	Պայմանագրի համարը և ստորագրման ամսաթիվը	Պայմանագրով նախատեսված ավարտը	Պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման ակտի ստորագրման ամսաթիվը	Պայման ագրի արժեքը	Պատվ իրատուն
1.	1)					

	2)					
	3)					
2.						

Մասնակիցը՝

- վերը նշված երկու աղյուսակները ներկայացնում է pdf և Excel ձևաչափերով,
- ներկայացնում է ցանկում ներառված աշխատանքների ճարտարապետական պորտֆոլիոն /pdf ձևաչափով, առավելագույնը 25MB/, ներառելով նաև 1-ին և 2-րդ աղյուսակներում ներկայացված նախագծերով կառուցված օբյեկտների լուսանկարները,
- ի լրումն վերը նշվածի, կարող է ներկայացնել լրացուցիչ տեղեկանք /փաթեթ/՝ կազմակերպության կամ աշխատակազմում ներգրավված մասնագետների փորձի վերաբերյալ:

10. Գնահատման սկզբունքներ

- Գնահատման 1-ին չափորոշիչով գնահատվում է պահանջներին համապատասխանող պայմանագրերի քանակը,
- Գնահատման 2-րդ չափորոշիչով գնահատվում է պահանջներին համապատասխանող պայմանագրերի քանակը,
- Գնահատման 3-րդ չափորոշիչով գնահատվում է 2-րդ որակավորման չափորոշիչով գնահատված աշխատանքների պայմանագրային արժեքների հանրագումարը,
- լրացուցիչ տեղեկանքով ներկայացված տեղեկատվությունը ընդունվում է ի գիտություն, առանց գնահատման:

Կազմակերպությունը պետք է ներկայացնի իր կողմից կատարված աշխատանքների ճարտարապետական պորտֆոլիոն, pdf ֆայլով, առավելագույնը 20MB:

Հետաքրքրված խորհրդատու ընկերությունները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ և տեղեկություններ (կազմակերպության կանոնադրությունն ու գրանցման վկայականը, ինչպես նաև վերը նշված որակավորման չափանիշներով սահմանված տեղեկություններ), որոնք կհավաստեն, որ կազմակերպությունը ունի պահանջվող որակավորում և համապատասխան փորձ վերոհիշյալ ծառայությունները կատարելու համար: **Աշխատակազմի աշխատանքային ինքնակենսագրությունը պետք չի ներկայացնել տվյալ փուլում:**

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ "Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011, փոփոխված 2014թ", 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի "Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011, փոփոխված 2014թ" 3.7 կետում սահմանված "Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն" ընթացակարգին համաձայն:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ կազմակերպությունների հետ համատեղ գործունեության ձևով կամ վարձելով ենթա-խորհրդատու՝ իրենց որակավորումները բարելավելու նպատակով:

Լրացուցիչ տեղեկություններ հնարավոր է ստանալ ստորև բերված հասցեում, ՀՏԶՀ-ի գրասենյակից, աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 18:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն գրավոր ձևով ստորև ներկայացված հասցեով (առձեռն կամ փոստով կամ էլ-փոստով) ոչ ուշ քան **2022թ. հոկտեմբերի 10-ը, ժամը 17:00**:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ,
ՀՀ, ք.Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31, ՀՏԶՀ գրասենյակ,
Գնումների բաժին, 406 սենյակ,
Հեռախոսը՝ (374 60) 50-15-60,
էլ-փոստը՝ procurement@atdf.am: